

ԳԻՏԱԿԱՆ ԼՐԱՑՈՒ

ՍԻԱՑՑԱԼ ԱՐՁԱՆԱԳՐԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԱՐՇԱՎ

Ժողովուրդների պատմության և մշակույթի ուսումնասիրության սկզբնաղբյուրներից մեկի արձանագրություններն են, գրված հասարակական ու մասնավոր շենքերի, տնտեսական կառուցվածքների՝ ձիթհանների, ջրաղացների, հաղորդակցության ճանապարհների—կարավանատների, կամուրջների պատերի, ապա դամբարանատների (мавзолея), տապանաքարերի, խաչքարերի, հատուկ կոթողների և տնային տնտեսության առարկաների—կավի և մետաղի վրա և այլն:

Արձանագրությունները ճշմարտացի և անկողմնակալ փաստագրեր են քաղաքական, տնտեսական, կենցաղային բազմապիսի դեպքերի ու գործարքների վերաբերյալ և որովհետև ճշող մեծամասնությամբ թվագրված են, ապա և ամենակարևոր աղբյուր են հանդիսանում պատմական ամեն տեսակի երևույթների ժամանակագրության ստուգման համար:

Այժմ անկարելի է պատկերացնել նաև հայ ժողովրդի պատմության, մշակույթի, արվեստի և որևէ այլ բնագավառի մասին գրված ուսումնասիրություն, որտեղ օգտագործված չլինեն արձանագրական փաստեր:

Տասն հազարի հասնող հայերեն միայն վիմագիր արձանագրությունները Սովետական Հայաստանից բացի, սփռված են նաև այն բոլոր վայրերում, ուր անցյալում ապրել են հայեր: Այդ մեծ քանակի միայն շնչին մասն է մինչ այժմ հավաքված և հրատարակված:

ԳԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտը 1954 թվականից սկսած ձեռնարկել է հայերեն արձանագրությունների սխտեմատիկ և ժամանակակից դիտական հիմունքներով հավաքելու աշխատանքը՝ մշտական գիտարշավի միջոցով և նրանց դիտական հրատարակման գործը՝ առանձին պրակներով, որոնք կազմելու են լիակատար ժողովածու—«Դիվան հայ վիմագրության», որի մի պրակն արդեն լույս է տեսել:

Կովկասի տերիտորիայում, Սովետական Հայաստանից բացի, մեծ թվով հայերեն արձանագրություններ են գտնվում Սովետական Ադրբեջանի սահմաններում և համեմատաբար ավելի քիչ թվով՝ Սովետական Վրաստանի սահմաններում, և հակառակը՝ փոքր թվով արաբատառ (արաբերեն, պարսկերեն) և վրացերեն արձանագրություններ կան նաև Սովետական Հայաստանի սահմաններում. կովկասյան երեք ժողովուրդները պատմության ընթացքում ապրել են կողք-կողքի և խառն, նրանց պատմական անցյալը սերտորեն կապված է իրար հետ, և ոչ մի պատմական ուսումնասիրության հեղինակ չի կարող այդ ժողովուրդներից մեկի պատմական անցյալը պատկերել ուրվագծել, առանց մյուսների հետ ունեցած փոխհարաբերությունների և կապերի պարզաբանման: Իսկ այդ հարցերի լուսաբանման համար կարևոր սկզբնաղբյուրներ են նաև նշված բազմալեզու արձանագրությունները, այդ իսկ սլաոնաոով զրանց համատեղ ուսումնասիրության հարցով զբաղվել են նաև անցյալում խոշոր և առաջադեմ շատ գիտնականներ: Նշենք միայն հանրաժանով ազգ. Մառի անունը: Ներկայումս սովետական սերտ ընտանիքով ապրող ժողովուրդների համար ավելի քան անհրաժեշտ է նման համատեղ գիտական ուսումնասիրությունների ձեռնարկումը: Այժմ մեծ աշխատանքներ են տարվում ազգեմիականների աշխատանքների կոորդինացման բնագավառում: Դրա արտահայտություններից մեկն էլ հենց Հայ-ՍՍՌԻ ԳԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի և Ադրբեջ. ՍՍՌԻ ԳԱ Պատմության ինստիտուտի կողմից կազմակերպված և արդեն երկու տարի աշխատող միացյալ արձանագրագիտական գիտարշավն է (ղեկավար Ս. Բարխուդարյան, տեղակալ Ադրբ. ՍՍՌԻ ԳԱ Պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող Մաշադի խանում Գուլիև):

Սրկու տարվա ընթացքում Միացյալ արշավախումբը շրջադաշն է Ադրբեջանում, չինեով Լեռնային Ղարաբաղի բոլոր հինգ շրջաններում, ինչպես նաև Ֆիզուլիի, Լաչինի և Քյալաբադի շրջաններում, իսկ Հայաստանի սահմաններում՝ Գորիսի, Սիսիանի և Միկոյանի շրջաններում:

1 Դիվան հայ վիմագրության, 11, Գորիսի, Սիսիանի և Ղափանի շրջաններ, Երևան, 1960:

Այդ աշխատանքների ընթացքում ուսումնասիրվել և հավաքվել են 600-ի մոտ հայերեն և մի քանի տասնյակ արաբատառ արձանագրություններ, ընդ որում դրանք տեղում վերծանվում, արտագրվում, լուսանկարվում էին և ի հարկին՝ էստամպա հանվում:

Արդեն հավաքված այդ մեծ ժողովածուի հայերեն մասի թվագրված հնագույն արձանագրությունները վերաբերում են 9-րդ դարին. ըստ ծրագրի՝ հավաքվում են մինչև 17-րդ դարը ներառյալ բոլորը, իսկ ավելի նորերը՝ ընտրովի:

Ըստ բովանդակության հայերեն արձանագրությունները կարելի է բաժանել մի քանի մեծ խմբերի. շինարարական, նվիրատվական, օրենսդրական, զանազան պատմական տիպերի հիշատակարանների և այլն: Այդ արձանագրությունների օգնությամբ հնարավոր է պարզել ու ճշտել շատ պատմական դեպքերի և հայտնի գործիչների ժամանակագրությունը, տիրող իշխանական տների տոհմագրությունը և նրանց կալվածների սահմանները: Արձանագրությունները առատ նյութ են պարունակում նաև պատմական աշխարհագրության համար, նրանց մեջ հիշատակված են բազմաթիվ տեղանուններ, որոնք այլ աղբյուրներից հայտնի չեն և պարզում են շատերի ճիշտ վայրը, որոնք միայն անուններով են հայտնի: Արձանագրությունները շատ արժեքավոր նյութեր են պարունակում նաև միջնադարի սոցիալ-տնտեսական կյանքի պարզաբանման համար. այսպես, դրանցից ոմանց մեջ հիշատակվում են վանքերին նվիրաբերած ամբողջ գյուղեր, առանձին հողաբաժիններ, այգիներ, ջրաղացներ, ինչպես նաև շարժական գույքի, դրամների մասին, ըստ որում նվիրաբերողները թե՛ իշխանական տների անդամներ են և թե՛ սովորական մարդիկ, բայց և կան զուտ կալվածագրային արձանագրություններ, որտեղ նշված է որևէ հողաբաժնի առուծախի և տրված գումարի քանակի մասին: Ի վերջո նշենք նաև, որ արձանագրությունները արժեքավոր աղբյուր են հայոց լեզվի պատմության և հատկապես բարբառագիտության համար. որովհետև տարբեր վայրերի ու բարբառների բառեր, ոճեր և ամբողջ արտահայտություններ տեղ են գտել նրանցում շնորհիվ այն հանգամանքի, որ կազմող և փորագրողները միշտ տեղացիներ են եղել և հաճախ ոչ լավ գրագետներ:

Նշենք նաև, որ արշավախումբը, բացի արձանագրություններից, հավաքել է մեծ քանակությամբ կենցաղային տեսարաններ պատկերող քանդակներ, որոնք կարևոր հիշատակարաններ են ոչ միայն միջնադարի արվեստի ուսումնասիրության, այլև ազգագրության մասին. դրանց վրա արտահայտիչ կերպով երևում են հագուստի, զբաղմունքի, երկրագործության գործիքների, տնային կահ-կարասու ձևերը, ինչպես նաև հարսանիքի, թաղման, ռազմական խաղերի և այլ բազմաթիվ սովորությունների իրական պատկերացումները: Այդ աշխատանքները կատարում է արշավախմբի իսկական անդամ Գ. Կարախանյանը: Արշավախումբը տեական է և նրա աշխատանքները շարունակվելու են: Նրա կազմի մեջ մտնում են 6—8 հոգի՝ Հայկ. ՄՍԻ ԳԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի և Աղբյուրների ԳԱ Պատմության ինստիտուտի աշխատակիցներ:

Նրկու տարվա համատեղ աշխատանքի փորձը ցույց տվեց, որ նման համատեղ աշխատանքը խիստ օգտավետ է: Այդ մասին նշվել է Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական խորհրդի նիստերում, ԳԱ Հասարակական գիտությունների բաժանմունքի բյուրոյում, և Աղբյուրների ԳԱ Պատմության ինստիտուտի գիտական խորհրդի րնդլայնված նիստում՝ Ս. Բարխուդարյանի հաշվետու զեկուցումից հետո:

Ս. ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ